

ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳ ԱՄՅԱԿ
ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ
1926 - 2011

Մեր սիրելի եւ անմոռաց դպրոցին՝ Մելգոնեան Կրթական Հաստատության հիմնադրության ութսունհինգ ամեակի Յոբելեական տարի է 2011 թուականը:

Կ՝ողջունե՛նք այս փառապանծ տարեդարձը:

Երբ 1926 Փետրուար – Մայիս ամիսներուն, Կիպրոսի մէջ, պաշտօնապէս կը բացուէր Սփիւռքի ամենամեծ գիշերօթիկ երկսեռ կրթօճախը, ապահովաբար նախախնամական դեր վիճակուած էր անոր: Այդ օրերուն, Մեծ Եղեռնի սարսափէն մազապուրծ բիրաւոր հայ որբերուն համար Մելգոնեանը եղաւ ոչ միայն փրկութեան լաստ եւ ապահով տուն, այլ մանաւանդ՝ «լուսոյ անշէջ վառարան»:

«Կրթարանին Մելգոնեան փառք ու պատիւ յաւիտեան»:

Կ՝ոգեկոչեն՝ք յաւէտ ինկելի յիշատակը Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան Բարերարներուն: Անոնք Հայ Ազգին կտակեցին հսկայական հարստութիւն՝ որպէսզի իրագործուի իրենց Տեպականը, Նպատակը ու Փափաքը: Տեպականը՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնն էր. Նպատակը ու Փափաքը՝ նոյն այդ Հաստատութեան գոյատեւումը դարէ դար... *«տալու համար Հայ Ազգին, Հայ Հայրենիքին եւ Մարդկութեան օգտակար եւ պարկէշտ Նկարագիրով անդամներ»:*

*«Օն՝ ողջունենք անձկագին, Մեծ Բարերարն Ազգային
Ու իր կանգնած կրթական այս Տաճարը պատուական»*

Հետագայ տասնամյակներուն Մելգոնեանը դարձաւ ազգապահպանումի եւ հայակերտումի ամրոց, բարձրորակ ուսումի եւ մարդակերտումի օճախ: Արդարեւ, անգնահատելի եղաւ Մելգոնեանի ն երդումը ի նպաստ հայեցի դաստիարակութեան, մշակութային եւ մտաւորական մակարդակներու բարձրացման եւ զարգացման, Սփիւռքի եւ Հայրենիքի տարածքին: Ի դէպ, տեղին է յիշել, կաթողիկոսներ, նախագահներ, մեծանուն գրողներ, երեւելի մտաւորականներ, յայտնի անձնաւորութիւններ բարձր գնահատականներով եւ վկայութիւններով արժեւորած են Մելգոնեանի անփոխարինելի դերը որպէս բարձրորակ ուսումնական եւ հայեցի դաստիարակութեան կեդրոն՝ Քսաներորդ Դարու Սփիռքահայ իրականութեան մէջ:

Այսուհանդերձ. Մելգոնեանը փակուեցաւ Յունիս 2005 ին եւ տակաւին կը յամենայ մնալ փակ եւ ամայի: Անտարակոյս՝ 79 տարուան սակաւատեւ կեանք մը՝ այսպիսի կարեւոր կրթական հաստատութեան մը համար: Անշուշտ դժուար չէ եզրակացնել՝ Մելգոնեանի փակումով ծանր հարուած կրեց ու ջլատեցաւ հայապահպանումի եւ հայեցի դաստիարակութեան գործընթացը Սփիւռքի մէջ:

Եւ արդ. մենք, Մելգոնեանցիներս, միակ երազ մը ունինք որ պէտք է իրականանայ:
Ուրախ ենք որ այդ երազին իրականացման համար յամառ եւ անդուլ աշխատանքը չէ՛
դադրած, այլ ստացած
է նոր թափ:

Մեր երազն է՝

Վերաբացուած տեսնել այս խիստ ազգոգուտ եզակի Հաստատութիւնը՝ իր ընդարցակ
կալուածներով, զքանչելի յարմարութիւններով եւ անսպառ կարելիութիւններով, որպէսզի
այս խիստ ազգոգուտ եզակի Հաստատութիւնը նորահաս սերունդներ հայօրէն դաստիարա-
կելու իր առաքելութիւնը կարենայ շարունակել՝ *դարձ դարձ*:

NEVER GIVE UP ON A DREAM !

ԿԱՐՕ ԳԱՍԱՊԵԱՆ